Ծնվել է 1969 թվականի օգոստոսի 4-ին, Երևանում:

1986թ. ավարտել է Երևանի թիվ 114 անգլիական թեքումով միջնակարգ դպրոցը:

1994թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1986-1990թթ. աշխատել է Երևանի Կլարա Ցետկինի անվան կարի ֆաբրիկայում, Երևանի միջքաղաքային հեռախոսային կայանում, Գուգարք կոոպերատիվում որպես բանվորուհի:

1990-1993թթ. աշխատել է Երևանի Խորհրդային շրջանի ժողդատարանում որպես դատական նիստերի քարտուղար:

1993-1995թթ. աշխատել է ՀՀ Գերագույն խորհրդի իրավական հարցերի մշտական հանձնաժողովում որպես գործավար:

1995-1996թթ. աշխատել է ՀՀ Գերագույն խորհրդի իրավաբանական բաժնի, տեղեկատվական իրավական ապահովման և կոդիֆիկացիոն աշխատանքների ենթաբաժնում որպես վիճակագիր:

1996-1997թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական բաժնում որպես խորհրդատու:

1997-1998թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի իրավաբանական ծառայության դատական վերափոխումների իրավական ապահովման բաժնում որպես ավագ խորհրդատու:

1998-2002թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի իրավաբանական վարչության, քրեական և վարչական օրենսդրության փորձաքննության բաժնում որպես գլխավոր մասնագետ:

2002-2014թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական վարչության պետ:

2014թ. հունիսին նշանակվել և 2016թ. հոկտեմբերին ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

2022թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

2022թ. հոկտեմբերի 12-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ընտրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

2009 թ. ներկայացնում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Մարդու իրավունքների շուրջ ՀՀ-ԵՄ երկխոսության նիստերին:

2004-2005թթ. դասավանդել է Հայ-սլավոնական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ ընտրական իրավունք, ընտրական գործընթաց: 2006թ-ից. ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների, տեխնիկական սարքավորությունները սպասարկող մասնագետների մասնագիտական դասընթացների ուսուցանող է, ՀՀ ընտրական օրենդրությանը և վարչարարությանը վերաբերող մի շարք ուսումնական ձեռնարկների (ուղեցույցների) հեղինակ:

Ամուսնացած է, ունի երկու դուստր: